

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

20.09. 2001թ.

ժ. 16.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Հ. Պետրոսյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Վ. Դանիելյանը (*Խորհրդի անդամներ*), Ա. Հարությունյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Ա. Սարգսյան (*Տեխնիկական նախագծերի մշակման բաժնի պետ*), Լ. Հարությունյան (*Մեքենայական ծրագրերի և տեխնոլոգիայի բաժնի պետ*), Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ*)

Օրակարգի նախագծում՝ երեք հարց.

1. 2001 թվականի մարդահամարի տվյալների մուտքագրման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Լ. Հարությունյան/

2. 2001 թվականի մարդահամարի լրացված հարցաթերթերում ձեռքով մշակման ենթակա հարցերի պատասխանների կողավորման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

3. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը: Խորհրդի 20.09.01թ. նիստի օրակարգի նախագիծը հաստատվեց միաձայն:

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. 2001 թվականի մարդահամարի տվյալների մուտքագրման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Լ. Հարությունյան/

Նշվեց, որ 2001 թվականի մարդահամարի տվյալների մուտքագրման կարգի մասին հրահանգը մշակվել է 2000թ. փորձնական մարդահամարի “Տվյալների մուտքագրման հրահանգի” և ԱՄՆ-ի Առևտրի դեպարտամենտի Հաշվառումների Բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոնի փորձագետ Շերրելլ Գոգինի “Տվյալների մուտքագրման վերաբերյալ ուղեցույցի” հիման վրա: Այն համաձայնեցված է նաև “ՀՀ 2001 թվականի մարդահամարի հարցաթերթը լրացնելու /մարդահամարն անցկացնելու/ կարգի մասին” և “2001թվականի մարդահամարի լրացված հարցաթերթերում ձեռքով մշակման ենթակա հարցերի պատասխանների կողավորման մասին” հրահանգների հետ: Փաստաթուղթը ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Որոշեցին՝

հաստատել 2001 թվականի մարդահամարի տվյալների մուտքագրման կարգի մասին հրահանգը/կցվում է/:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. 2001 թվականի մարդահամարի լրացված հարցաթերթերում ձեռքով մշակման ենթակա հարցերի պատասխանների կողավորման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ 2001 թվականի մարդահամարի լրացված հարցաթերթերում ձեռքով մշակման ենթակա հարցերի պատասխանների կողավորման կարգի մասին հրահանգը մշակվել է 2001թ. մարդահամարի հարցաթերթի և “ՀՀ 2001 թվականի մարդահամարի հարցաթերթը լրացնելու /մարդահամարն անցկացնելու/ կարգի մասին” Հրահանգի հիման վրա՝ հաստատված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001թ. հունիսի 26-ի թիվ 9 որոշմամբ:

Որոշեցին՝

հաստատել 2001 թվականի մարդահամարի լրացված հարցաթերթերում ձեռքով մշակման ենթակա հարցերի պատասխանների կողավորման կարգի մասին հրահանգը/կցվում է/:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Այլ հարցեր

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Հարությունյան